

Կարգադրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ 36



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄՈՋԵՐԵՐԸ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 36 || 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903



ՆՈՐ ԱՄԵՐԻԿԱ

Նե Աստուծոյ զրաւ բարիքն ունեւ ամեն,
 Ունեւ բարի ամուսին մը սիրաւ սրտէն.
 Մանչ մ'ալ ծնաւ, ուրախութիւնն իր Սիրանուռ:
 Նորածինը որանին մէջ ննջէր մուռ մուռ,
 Իր ստիճան մայրն էր որուն անկողնին մօտ
 Մանչը՝ քաղցրիկ աղմուկ հանէր մինչ առաւօտ.
 Եւ մայրն բանար հոգին լեցուն սիրով անեղ:
 Խեղճ մա՛յր, աչերն կը փայլէին ըսուերին մէջ
 Սրբ, անշուշտ հակաւ խարստաւ զրոյն վրան,
 Լըռիկ, մնջիկ կ'ունկնդրէր նինջը մանկան:

Երեք տարուան եղաւ, տարիք մ'ուր ամեն բառ,
 Զերդ մատղաւակ թռչնիկ բաղխէր թեւերը յար,
 Եւ մայրն կ'ըսէր. « Ո՛հ, որդեա՛կըս » եւ կը յարէր,
 « Տեսե՛ք զրդաս մեծ է, նանչնայ, կարդայ գրեր ».
 « Զարանքնին այլ եւս չուզէր հագնիլ աղջկան
 « Այս յաբերք, կ'ուզէ հագնիլ մեծ պատմունան:
 « Զար է, շատ չար պզտիկ մարդըս, բայց ուշիմ է,
 « Լաւ կը կարդայ, շուտով ան պիտ' յառաջդիմէ,
 « Իրեն պիտի հեգել տամ եւ Աւետարան... »
 Եւ նե աչերն միշտ կը յարէր գլխուն վրան:
 Կին երջանիկ, մայր յաղթական ակնարկին մէջ,
 Որ զաւկին մէջ կ'զգայ զարկը սրտին անեղ:

Օր մը (բոլորս ալ ունինք այս օրը, աւա՛ղ)
 Փողացաւ, վայրագ կըմախք, անգուր ճիւղ,
 Յանկարծ մըտաւ երդի՛ւնն ներս ներմալ տունն, ա՛հ,
 Եւ նետուեցաւ խեղճ մանկիկին որանին վրայ.

Զայն կոկորդեն բռնեց ուժգին, ախտ չարագուռ,
 Որուն դեմքին վրայ միայն կայ բոք ու գոյժ,
 Ու, աւա՜ղ, այս խեղճ մանկիկները չքողուր,
 Ու կը խեղդէ իր մասներով վրէժս ու սուր :
 Պատէ բսուերն հրեշտակի աչերն աղու,
 Եւ իրենց ցուրտ բերնէն կ'ելնէ հոփնդն մահու :
 Այնքան սքիսուր, խորհրդաւոր, որ կուրծքին տակ
 Մարդ կ'զգայ թէ կը հասնի իր շունչը համակ,
 Եւ դամբանի ափաղաղը երգէ սքիսուր :
 Զերդ պսուղ մը որ եղեամբն վերէն զգայ սուր
 Մեռաւ սրղան : Մահը մըսաւ գողի մը պէս,
 Տարաւ սրղան ..

Մայրն նըւաղուն ու վեսակեզ,
 Մինչ իր շուրջը մըռայադէմ հայրը կուլար,
 Երեք ամիս մընաց լրսին ու անշարժ յար :
 Աչերն յառած միշտ մի եւ նոյն պատին անկիւն,
 Միշտ անորոշ մըմնչելով տարած հնչիւն :
 Բժիշկն կ'ըսէր. « Այս սքիսուր սիրտն հրնուի իսկոյն,
 Եթէ Աստուած տայ եղբայր մը մեռած սրղուն » :
 Բայց նէ գոչէր միշտ ծնրադիր. « Ո՛չ, ո՛չ, հոգի՛ս ,
 « Ո՛չ չեմ կրնար, գիտեմ պիտի դուն նախանձիս ,
 » Դո՛ւն, անուշի՛կս, հողին տակէն պիտի գոչես յար ,
 « Ո՛հ, մոռցար գիս, իմ տեղս ուրիշ մը բռնեց ալ :
 « Աղուոր է ան, մայրս կը սիրէ զայն, տայ համբոյր՝
 « Մինչ ցուրտ շիւմին տակ կը պառկիմ ես յաւեռ լուռ ,
 « Ո՛չ, ո՛չ » : Այսպէս կ'ողբար մայրը ցաւով անհուն ,
 Բայց նէ ծընաւ ուրիշ մանկիկ մըն ալ սիրուն :
 « Ո՛հ, մանչ է, մանչ » գոչեց հայրը զըւարթածայն ,
 Բայց տանը մեջ հայրն էր ուրախ, հայրը միայն :
 Երբ կար կուտար խոր տխրագգեաց մայրն մանկիկին,
 Միշտ մտածէր մեռնողին վրայ քան նորեկին ,
 Ան կ'երազէր հողլաթէն շատ պատանն ներմակ :
 Կ'ըսէր. « Հրեշտակը շիւմին մեջ է միս միմակ » :
 Ո՛վ քաղցր հրաւք, ո՛վ նորաբոյս երջանկութիւն :
 Բազուկներուն մեջէն լսեց ձայն մը սիրուն :
 Նորածինն էր որ կը խօսէր, մըմնչէր յար ,
 « Այդպէս մ'ըսէր, ես եմ ո՛վ իմ անուշիկ մայր... »

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. 32րդ Թիւէն)

Ո Ճ

Բարւոք (ամէնէն աւելի աղէկ ու աղւոր) քսելու, ինքնիրեն բարւոք ո՞՞նք մը յօրինելու այնքան թանկագին տաղանդն ստանալու գերադրապէս ապահով ու վստահ միջոցն է մեր հատընտիր հեղինակաց մէջ և գրագիտական քառընտիրներու մէջ տեսականը, այսինքն գրելու արուեստին յատուկ կանոններն ու դադտնիքները սորվիլ, սերտել:

Ո՞՞՞՞ ըսելով կ'հասկնանք այն արտաքին ձեւը որով կ'հագուցենք մեր մտածումները: Մտքերու և հոգիներու մէջ հաղորդակցելու միջոցն է ան: Ո՞՞՞՞ կ'տարբերի խօսքէն, զի սա (խօսքը) կ'սահմանափակէ մեր զգացումներն ու գաղափարն, ինչպէս որ կ'ներկայանան մեր մտքին, զանոնք դուրս տալուն, արտայայտելուն մէջ. մինչդեռ ո՞՞նք զանոնք կ'արտադրէ կանոնապահական խիստ ու կարեւոր կարգի մը մէջ, հանդերձ անոնց տալիք կամ ենթարկուելիք պարտ ու պատկան զարդարանքներով, որք կը կարողանան մեր մտածումներուն ու բացատրութեանց արժէքն աւելի յուզիչ ու համոզիչ կերպով ի վեր հանել:

Ո՞՞՞՞ զերազանցօրէն մեծ կարեւորութիւն ունի. զի ո՞՞՞՞նք որ գրագէտ մը, մատենագիր մը կ'հանդիսանայ հաճելի ու համոզող: Յաճախ կը պատահի որ գրագէտի մը կարծիքները կ'ընդունինք, կ'որդեգրենք անոր համար որ անոնք մեզ բացատրուած են մեր միտքը, հոգին ու սիրտը հրապուրող, հմայող ո՞՞՞նք մը: Ամէն ինչ ըսուած է. շատ երկար ատենէ ի վեր մարդիկ կը խօսին ու կը գրեն որ կարենան կարծեցնել թէ նոր կ'ըսեն. ձեռն է ուրեմն որ նոր է. և ձեռն է ո՞՞նք: «Ո՞՞՞՞ մարդն ինքն է» բանաձեւած է Պիւֆօն, թելադրուելով անշուշտ իրմէ շատ առաջ Մոնդէսկէի սա խօսքէն որով մատենագրած է. «Ես եմ իմ գիրքս» այսինքն թէ իմ գիրքս, իմ գրելու եղանակս, իմ ԵՍս է:

Ո՞՞՞՞ զգրագէտին հոգեբանական դիմագիծն է, անոր մտքին լուսանկար պատկերը: Կարելի է իւրացնել նորաստեղծ գիւտերը, հնարքներն ու նորանոր գաղափարները որք դարձէ դար, օրէ օր՝ կ'յայտնուին. սակայն կարելի չէ հեղինակի մը, գրագէտի մը ո՞՞նք իւրացնել: Ամէն օր պիտի ունենանք այլևայլ գրողներ, բայց ոչ ոք պիտի ըլլայ Հոմերոս կամ Վիրգիլիոս, ոչ

ոք պիտի ըլլայ Դէմութէն կամ Կիկերոն . ոչ ոք՝ Շէքսպիր կամ Շիլլէր, Շաթոպրիան կամ Պայրն, Լամարդին կամ Հիւլիօ, Եղիշէ կամ Եղնիկ, Մամուրեան կամ Պէրպէրեան . իրենց գրական ու մտաւոր ինքնութեան յատկացուցիչ ու բացայայտիչ ոճովն որով կ'փայլին իրենց յաւերժական երիտասարդութեան մէջ, իրենց տիպար, ընդօրինակելի ու մենաշնորհ հանճարովն ու ճարտարարուեստ թէ եղական տաղանդովը, որ անոնցմէ և անոնցպիսիսինքնէն անձնիւր զերտղանց ու աննման կ'հանդիսացնէ: Սակայն բարւոք ոճ մ'ունենալու համար անհրաժեշտ է ճանաչել անոր պայմանները, պէտք է ուսանիլ անոնց յատկութիւնները որք երկու տեսակ են . Ընդհանուր կամ Մասնաւոր:

Բայց ինչ որ ալ ըլլայ գրութիւնը կամ ճառութիւնը նիւթը, Գիտութիւններ, Դպրութիւններ, Պատմութիւն, Իմաստասիրութիւն, Եւայլն, պէտք է զանոնք գրել պատշաճ կերպով մը, այսինքն համաձայն ինչ ինչ կանոններու զբոս կ'թևադրեն իմաստնագոյն բանն (խելք) ու ընտրելագոյն ճաշակը, այս կանոններն են որք ամփոփուելով կ'կոչուին ոճին ընդհանուր յատկութիւնները:

Ոճին ընդհանուր յատկութիւններն են. Պայծառութիւնը կամ յսակութիւնը (la clarté), մաքրութիւնը (la pureté), համառօտութիւնը կամ ճշգրտութիւնը (la précision), բնականը (le naturel), ազնուութիւնը (la noblesse), մեծավայելչութիւնը կամ շքեղութիւնը (l'élégance), ներդաշնակութիւնը (l'harmonie), պէսպիսութիւնը (la variété) եւ պատշաճութիւնը (la convenance):

ԱՐՄԷՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԼԵՆ ՇԻ ՆՈՐ ԱԶԳՅՐՈՒ

Ա .

ՃԱԲՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ Ի Ր Ծ Ի Լ Ե Զ Ո Ւ

Ճարոնները մեր թուականին Գ. դարէն ի վեր է որ գիրի գործածութիւն ունին: Նշանագրերու երկու տարբեր դրութիւն կը գործածեն. Չինական նշանագրերը կը գործածեն գլխաւորաբար գիտական գործերու եւ կամ իրենց հեզարաններուն (syllabaire) մէջ, որոնց իւրաքանչիւրը 47 հեզանիչ կամ վանկանիչ կը պարունակէ:

Այս վերջինները Ը. դարուն կէսէն ի վեր գործածութեան մտած են և մեծ մասամբ չինական նշանագրերէն առնուած գիծերով կազմակերպուած: Ծառոններու հեգարանները իրարմէ տարբեր չորս կարգ են:

Ա. Քաղաքացիական կոչուածը, որ ամէնէն յարմարն է այր մարդոց գործածութեան:

Բ. Հրաւանա, աւելի կիներու յատուկ:

Գ. Մանեօ-հանա, բոլորովին չինական նշանագրերէ կազմուած:

Դ. Եա-մա-դօ-հանա, որ ճառքներու գերազանց գիրն է:

Երբեմն ալ այս այլ և այլ դրութիւնները խառն կերպով կը գործածեն, որով ընթերցումը տարօրինակ կերպով կը դժուարանայ:

Ծառոններէն ինչպէս Չինարէնին մէջ, գիրերը վրձինով կը գծուին, վերէն վար սիւնակ սիւնակ՝ որոնք աջէն դէպ ի ձախ կ'երթան:

Ծառոններէնը թէեւ թաթարական լեզու մը նկատուած է ումանց կողմէ, բայց այդ կէտը դեռ ըստ բաւականին հաստատուած չէ, քանի որ ոմանք ալ ուրոյն լեզու մը կը համարեն զայն: Իր կազմութեամբ, բարդային լեզուներու կարգին կը վերաբերի: Ծառոն լեզուին մէջ յայտնապէս կը տեսնուին երկրորդական արմատներ, որոնք առնչութեան զաղափար մը յայտնելու համար իրենց անկախութիւնը կորուսած՝ կը յաւելնան գլխաւոր արմատին վրայ. օրինակ, հիդօ = մարդ, հիդօնօ = մարդու, հիդօդէ = մարդով, հիդօդացիք = մարդոց, հիդօդացիք = մարդերով:

Յօդ և սեռ գոյութիւն չունին այս լեզուին մէջ. միայն բռնական սեռերը իրարմէ զանազանելու համար շնչաւոր էակներու անուանց սկիզբը կը յաւելցնեն գործածութեան մէջ օ և մէ, մէկը արու և միւսը էգ ցուցնելու համար: Օրինակ.

Օ-նեօ=Մալուած կատու, Մե-նեօ=էգ կատու: Արու (ըլլալ կամ գործել) գոյականներուն ծայրն յաւելնալով շատ մը բայեր կը շինէ: Ասոնց ժամանակները յանգերով կ'որոշուին, բայց դէմքերը՝ դերանուններով որոնք բազմաթիւ են, երկրորդ դէմքի համար 12է աւելի դերանուն կը գործածեն խօսակիցներու աստիճանին համեմատ:

Ծառոններէնը ներդաշնակ լեզու մըն է. բառերէն շատերը ձայնաւորով կը վերջանան իսալերէնին պէս յաճախ քաղցրահնչուն: Բաղաձայնները մեղմ կերպով կը հնչուին: Գրաւոր լեզուն որոշապէս կը տարբերի խօսուած լեզուէն: Գրաւոր լեզուն յաւադօ կը կոչուի և ունի այլևայլ ոճեր, որոնք մասնաւոր բարբառներ ձեւացնելու չափ կը տարբերին սովորական լեզուէն: Բուզայական գրուածներու մէջ նաս-սեհ ոճը կը գործածուի. իսկ ուրիշ սեռերու մէջ Կե-սեհ ոճը, Բանաստեղծութեան համար գլխաւոր չափն է կա'մ հնգափանկը և կա'մ եօթնափանկը:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ճարոնական մատենագրութիւնը չինականին չափ ծանօթ չըլլալով հանդերձ, բաւական ճոխ է սակայն: Առաջին տեղը կը բռնեն պատմութեան վերաբերեալ բազմաթիւ և կարեւոր գործեր: Ազգային տարեգրութիւններն հին ժամանակներէ ի վեր անընդհատ կը հրատարակուին: Քերականական և բառագրական հմտալից աշխատութիւններ կան իրենց լեզուին, Չինարէնի և Արեւելեան ուրիշ լեզուներու վրայ: Այս ամէն ճիւղերու մէջ չինական մատենագրութիւնը մեծ դեր և ազդեցութիւն գործած է ճարոններէն իւրայ, և ճարոնները շատ բան փոխ առած և իւրացուցած են Չինարէնէն. այնպէս որ սոյն ուրոյն մատենագրութեանց մէջ դժուար է որոշել իւրաքանչիւրին բաժինը: Երկար ատենէ ի վեր Չինա-ճաբոնական Հանրագիտակ բառարան մը ունին որ 105 հատորէ կը բաղկանայ:

Բանաստեղծութիւնն ալ ամուլ չէ մնացած. կը գտնուին բազմաթիւ տաղեր, դիցաբանական և պատմական, որոնցմէ ոմանք շատ հին են: Ճարոնական ամէնէն նշանաւոր դիւցազներգութիւնն է Փե-Մօնօկասարին, որուն նիւթն է հին հարստութեան բանաստեղծական վէպը, զոր ժողովրդականացուցած է Սեօպիւդ կոյր երգիչը:

Թատրերգութիւնն ալ շատ հին է ճարոններուն քով. բայց որովհետեւ սովորութիւն է տեսարանին վրայ երկու անձերէ աւելի չունենալ, ատոր համար այս սեռը այնչափ զարգացում չէ ունեցած:

Վիպասանութիւնները առատ են՝ զորս կը վարձեն ընթերցատուններէն և ընդհանրապէս բազմահատոր գրուածներ են: Ճարոնական նշանաւոր վիպասանութիւններ են վարք Իվաթի իեխանի (12 հատոր), Եօրը երջանկութիւնք եւ Եօրը քեռաւութիւնք (5 հատոր), Տարփանք Ուոպայի եւ Տանսիդսիի (2 հատոր) ևլն.: Պատմական և վիպական մէկ քանի գործեր թարգմանուած են արդէն եւրոպական մէկ քանի լեզուներու:

Ճարոնցիք վերջերս յարարերութեան մտնել սկսած են Ամերիկայի և Արեւմտեան ազգերու հետ, կը մշակեն մասնաւորապէս եւրոպական լեզուներէն Ֆրանսերէնը և եռանդուն հետեւող մըն են արեւմտեան քաղաքակրթութեան:

1874ին Ետտոյի մէջ 20 պարբերական թերթ կը հրատարակուէր, բայց հիմա աւելի գարկ կը տրուի գրականութեան. կ'ըսուի թէ նոր կտակարանն անգամ թարգմանած են:

ՍՈՍԿԱԼԻ ՏԵՍԱՐԱՆ ՍԸ

ՕՐԱԳՐԱԻԹԻՒՆ

1903 Մայիս 28 չորեքշաբթի օրն, առաւօտուն երբ քունէս ելայ, օդը ջինջ ու պայծառ էր, միայն կարգ մը հորիզոնական ամպեր կը տեսնուէին երկնից երեսը որոնք բամպակի նման բարդուած էին իրարու վրայ: Անձրեւի նշան բնաւ չի կար, դպրոցի տեսնա կը մօտենար, ուստի, առանց հովանոցս հետ առնելու մեկնեցայ տունէն, զի այդ օրուան օդին պայծառութիւնը հովանոցի պէտքը չէր թելադրեր: Կէս օր՝ եղաւ, արեգակը փառաւորապէս կը փայլէր, և լուսանկար հանելու փափաքս արթնցաւ: Աշխարհագրութեան դասիս ժամանակն էր արդ, ժամը ութը զարկաւ, տղայք դասի եկած՝ սկսան մեր դասին պարապիլ և քանի որ այդ օրուան դասին նիւթին վրայ կը խօսէինք, որ ջուրերու և գետերու հոսման վրայ էր, յանկարծ փայլակ մը երեւցաւ որուն յաջորդող երկնային ժխորները ականջս կը պատուէին: Ժամացոյցս ձեռքս բռնած ակնապիշ ուրիշ փայլակի մը ելլելն կ'սպասէի, ամպերուն հեռաւորութիւնը գիտնալու նպատակաւ, և ահա սոսկալի կայծակներ իջան իրարու ետեւէ և երկնից երեսը ամբողջովին սև ամպերու սաւանով ծածկուեցաւ. բոլորովին խաւարման մէջ մնացինք: Անձրեւը պարանի նման խոշոր կաթիլներով կը տեղար, սակայն ասով չի գոհանալով կարկուտի փոխուեցաւ: Նոյն պահուն այս մտածումը կ'անցնէր մտքէս թէ այս տարի արդէն պտղէ զուրկ էր մեր պարտէզը ու հիմա ալ բոլորովին յոյսերս կտրուեցաւ. և քանի որ միտքս այս խորհուրդներուն կը տարուբերէր, իսկոյն ահարկու ձայն մը լսուեցաւ դրսէն, ի՞նչ կար արդեօք ելանքջութիւն, ո՛հ օգնութիւն, օգնութիւն, Աստուած: Ի՞նչ ցաւալի տեսարան... Ի՞նչ ցաւալի վիճակ...:

Թէեւ տարիքս 24 սակայն սաչափ կեանքի տեսողութեան միջոցին չեմ յիշեր նման տեսարանի մը հանդիպումը: Ասկէ քանի մը տարի առաջ հօրս հետ ճամբորդեցինք, շատ մը գեղեցիկ բնական տեսարաններ տեսայ. բայց տեսարան ըսելով ի՞նչ կը հասկնաք, անշուշտ քաղաքի մը դիրքն ու ժայռերու, դաշտերու երեւոյթը, սակայն ո՛չ, այս չէ, ըստ իս տեսարան մը այն է, որ մտքիս մէջ կ'զգամ, թէ բանի մը վարկենապէս պատահիլն ու կորսուիլն է: Ահաւասիկ անկարողութիւնովս կ'ուզեմ նկարագրել

վերոյիշեալ տեսարանը, ու կը խորհիմ թէ ընթերցող ու լսողներու զարմանք պիտի առթէ:

Հիւսէյնիկ գիւղաքաղաքը թէեւ մեծ չէ, սակայն զմայլելի բնական տեսարաններով շրջապատուած է, հարաւային կողմէն ընդարձակ դաշտերը կը պարզուին աջաց առջեւ, որը շղթայաձեւ լեռներով պատուած է, հիւսիսային կողմէն խարբերդ կ'ելլուի, որ լեռան վրայ շինուած քաղաք մըն է, ունի ամուր բերդ մը որ պատմագիրքերու մէջ յիշուած է: Հաստատութեամբ շատ հին այս բերդը իր առջեւ ունի Սինամուտ ըսուած թաղը, որ տեսնողին ուշադրութիւնը կը գրաւէ: Սոյն թաղը կը գտնուի ժայռի մը ստորոտը, որու վերեւը նոյնպէս բերդ մը հիմնուած է:

Հիւսէյնիկէն խարբերդ ելլալու երկու ճամբայ կայ, մին բերդին արեւելեան և միւսը արեւմտեան կողմը կ'իյնայ:

Դարնանք մեր նպատակին. մէյ մըն ալ դուրս ելանք որ Հիւսէյնիկը ամբողջ հեղեղներով շրջապատուած է. և ահեղ հոսանք մը կ'անցնի տուններու առջեւէն. հեղեղին երկու կողմը կեցող մարդոց ձայները դժուարաւ կը լսուէին, թէ և լայնութիւնը հազիւ 7-8 մէթր կար, որ գետնէն 2 մէթրի բարձրութեամբ, դէպի դաշտը կը խուժէր: Տուններու դուռներէն ներս ջուրեր սկսած էին վազել, պատերու ծեփերը կը թափէին և խարխուլ հիմերը կը քակուէին:

Հեղեղին արագութիւնն ալ աւելի էր թէ ամէն մէկ երկվայրկեանի մէջ գրեթէ 8-10 մէթր արագութեան կ'ստանար, որ մօտ տարիներուս մէջ մայիս ամսուն վերջին օրերը լսած ու տեսած չէի:

Լմնցա՞ւ... Այսչա՞փ է:

Ոչ, դեռ չի Լմնցաւ:

Չափազանցութիւնը ի բաց թողլով իմ աչօք տես տեսածս այսչափ միայն. գաւառնիս՝ տանիքները կը մինտր չէ, այլ պարզապէս հողեղէն, սոյն անց ու դարձը աւելի լաւ դիտելու համար տանիք ելայ, երանի թէ ելած չըլլայի, քանզի առաջուան նկարագրածս հիմակուան տեսածիս շատ փոքր բան մը կը դառնար: Գիւղաքաղաքիս հիւսիսային կողմէն ջրհեղեղի նման ուղիներ կը վազէին և այս կողմի ձորերը խորին և քարոտ ըլլալով, կազմուած հեղեղներուն հետ մէկ տեղ խոշոր քարեր կը տանէին որուն իւրաքանչիւրը 10 մարդ տեղէն չեն կրնար շարժել:

Մէկ կողմէն ջուրերու շառաչիւնը և միւս կողմէն մարդոց ձայները մեծ իրարանցում մը պատճառած էին:

Այս բանը շատերու համար ուրախառիթ էր, սակայն, ոմանք ալ ահաբեկեալ ողբ ու կոծ կ'ընէին տեսնելով որ ճամբաներէն

անցնելու ճար մնացած չէր: Նոյն պահուն շատերն ալ կարկուտին առջեւ կեցած գործին վերջաւորութեան կ'ապասէին, տխուր ու տրտմադէմ:


Այս յանկարծական երկնային փոփոխութիւնը ժամը իննին դադրեցաւ, և ասոր յաջորդեց պարզ օդ մը, ամպի մը հետք իսկ չի մնաց: Խարբերդ երթալու համար ճամբայ ելայ, շատերը իրենց մօտ մնալս խնդրեցին, սակայն, բնութիւնս այն է որ մտադրած բանս ի գործ դնելէ չեմ քաշուիր, ուստի չուտ մը ճամբայ ելայ: Անցնելիք ճամբաս բոլորովին փլած և խոր ձորեր բացուած էին մէջը: Զիւաւոր մը իսկ կարող չէր այժմ անցնիլ այս ճամբայէն:

Վերջապէս Ասորուց թաղին կողմէն, որ ճամբուս արեւելեան մասին վրայ է, վեր կ'ելլէի մտածելով այս հետաքրքրաշարժ վիճակներու վրայ, որոնք երեւակայութեանս առջեւ կուգային կ'երթային:

Սինամուտ թաղէն մեկնելուս պահուն, հարկ է կամուրջէ մը անցնիլ, սակայն ի՞նչ տեսնեմ, կամուրջը իր նախկին վիճակովը ամբողջովին հեղեղէն քշուած ու խորտակուած էր, թէ այս տեսարանը պատմել շատ դժուար է: Յակամայս խնդուկ մը բըրբուցի. զիս չկրնալ զսպելով և խորհեցայ թէ ինչ պիտի ըլլայ արդեօք Հիւսէյնիլը եթէ այս կարկուտը 5-6 ժամ շարունակէր:


Ուսուցիչ Խարբերդի Օսմ. վարժարանի

ՀԱՅԸԶ ՄԷՀՄԷՏ



ՏԵԿՆԵՐՆ ՍՊԱՍՈՒԼԵՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



(Շարուն. 34րդ Թիւէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ (Սպասուհիի հազուստներ հազած)

Շուշ. (Տիկ. Հռիփսիմեիճ). — Արդեօք ազնուափայլ Տիկին Հռիփսիմէին տունը ա՞յս է:

Տիկ. Հռ. — Այո՛, այս է. և ազնուափայլ Տիկին Հռիփսիմէն ալ ես եմ:

Շուշ. (համարձակութեամբ). — Այս պարագային, Տիկին, չնորհակալ եմ նախախնամութենէն որ ասդին անդին հարցունելէ

շատ չի յոգնած իսկոյն ձեզի հանդիպելու բարեբախտութիւնն ունեցայ. փա՛ռք քեզ Աստուած. Տիկին, ես այն պզտիկ սպասուհին եմ, որուն լուր ղրկեցիք Սամաթիա Ահարոն աղային առնել, ուր կ'աշխատէի, և պատիւ ունիմ Տիկին, Ձեզ մատուցանելու իմ ծառայութիւններս:

Տիկ. Հո. — Ըսէ նայիմ, զաւակս, ո՛ւր է քեզի կանչող սպասուհին:

Շուշ. — Շուշա՞նը, Տիկին:

Տիկ. Հո. — Այո, Շուշանը:

Շուշ. — Իմ մօրեղբորորդիս: Ան իմ մօրեղբօրս աղջիկն է Տիկին: Հանգուցեալ հայրս իր հանգուցեալ մօրը եղբայրն էր, կամ եթէ կ'ուզէք իր հանգուցեալ մայրը քոյրն էր իմ հագուցեալ հօրս որ իր մօրեղբայրն էր:

Տիկ. Հո. — Ինչպէ՞ս, Շուշանը քու մօրեղբորդ աղջիկն է:

Շուշան. — Այո, Տիկին:

Տիկ. Հո. — Բու մօրեղբորորդի՞դ, Շուշա՞նը քու մօրեղբորդ աղջիկը...

Շուշ. — Նոյն ինքն տիկին, իրարու այնքան կը նմանինք որ շատ ատեն կը չփոթեն մեզ իրարու հետ, դուք ալ այնպէս չէ՞ք գտնէր, տիկին:

Տիկ. Հո. — Այո, կարծես թէ... (աչփեւը ձեռնով շփելով եւ աղէկ մը երեսը նայելով) աչքերուս զօրութիւնը առաջուանը չի մնաց: Մօրեղբորորդիդ ինչո՞ւ հետդ չէ:

Շուշ. — Ա՛հ, տիկին, կ'աղաչեմ մի՛ հարցունէք, ատիկա չեմ կրնար ըսել (լալու պէս կ'ընէ): Խեղճ Շուշանս թեւը կոտրեց (կուլայ)...

Տիկ. Հո. — Ի՞նչ ըսիր, թեւը... Ի՞նչ է եղեր... հէ՛... չիմացայ, մէջ մըն ալ ըսէ:

Շուշ. (բարձր ձայնով). — Թեւը կոտրեց, տիկին. (կուլայ) աջ թեւը: Սանդուխէն իջած ատենը ոտքը սահեցաւ և յետոյ... (կուլայ) ոտքը դարձաւ: (կուլայ):

Տիկ. Հո. — Ըսէ նայիմ, վերջացուր խօսքդ, աս ի՞նչ ձիւն է որ գլխուս եկաւ:

Շուշ. — Ոտքը սահեցաւ... վար ինկաւ... պոռաց. (կուլայ) յետոյ տունինները հասան եւ վերցուցին, բայց աւա՛ղ, շատ ուշ էր, խեղճին սրունքը կոտրած էր և հիմա ծառի չորցած ոստի կերպարանքն ունի:

Տիկ. Հո. — Ինչպէ՞ս, սրո՞ւնքը, բայց քիչ մը առաջ թեւը կ'ըսէիր:

Շուշ. — Այո՛, ձախ թեւը:

Տիկ. Հո. — Ոչ, աջ թեւը:

Շուշ. — Զախը կամ աջը, աղէկ մը չկըցի որոշել. որովհետեւ, Տիկին, անանկ տարօրինակ կերպով մը ինկաւ որ թեւերը և ոտքերը իրարու խառնուեցան և անկարելի եղաւ ճշդել թէ ոտքերն են թէ թեւերը:

Տիկ. Հո. — Վերջը ինչ եղաւ:

Շուշ. — Վեր վերցուցին, որովհետեւ, մինակը չէր կրնար կոր ելլել կայնիլ և տարին անկողինը դնելով գինքը բժիշկին լուր ղրկեցին. — Գնա՛, իմ սիրելի մօրեղբորորդիս. ըսաւ իր ամէնէն անոյշ ձայնովը. գնա՛ տիկին Հռիփսիմէին ըսէ որ դառնապէս կը ցաւիմ. Աւա՛ղ, խեղճը... այնքան կը ցաւէր որ խօսքը չի կրցաւ աւարտել:

Տիկ. Հո. — Վա՛խ, վա՛խ, վա՛խ, գնա՛, վաղը անգամ մը հարցուր թէ ինչպէս է: Գալով քեզի, դուն ի՞նչ գիտես ընել:

Շուշ. — Ինչ որ պիտի հրամայէք, տիկին: Կերակուր և մանաւանդ անուշեղէն կամ խմորեղէն եփել լաւ գիտեմ, առանց թուելու տակաւին անոնք՝ զորս հաճելի ըլլալու համար պիտի սորվիմ տիկինէս:

Տիկ. Հո. — Ապրիս, աղջիկս, շատ գոհ եմ ատանկ արձակ համարձակ պատասխանելէդ. ստկից վատ, դուրս ելած միջոցներուս ետեւէս պիտի գաս և հովանոցս պիտի բռնես գլխուս վրայ երբ արեւին մէջ քալեմ: Բաց աստի, եթէ մէկը այցելութեան գայ՝ իսկոյն լուր պիտի տաս ինծի, և ամէնուն ալ զատ զատ ամթող պիտի ներկայացնես և նստելիք տեղերնին որոշես: Յետոյ, թութակիս ջուր եւ կեր տալու չպիտի մոռնաս նա վանդակը ամէն օր պիտի մաքրես. բաց աստի չնիկս, Ֆիտէլը, որ հոն անկիւնը պառկած կը տեսնես հիմա, երբեմն երբեմն պտտցնելու պիտի տանիս եւ յետոյ է՛ն կարելորդ՝ պառկած սենեկիս մուկները պիտի ժողվես ամէն օր (ժամացոյցին նայելով) ինչպէ՛ս, ինը գացեր է, շուտ... հա՛, աղէկ միտքս եկաւ, անունդ ի՞նչ է, գաւակս:

Շուշ. — Մարեան է:

Տիկ. Հո. — Աս անունը չսիրեցի ես, փոխե՛նք, Փառանձեմ դնենք:

Շուշ. — Փառանձեմ, շատ լաւ, տիկին:

Տիկ. Հո. — Փառանձեմ՝ սեղանը գնա՛ դիր, գիտե՞ս ինչպէս ընելդ: (Շուշան գլխով հաստատակամ նշան մը կ'ընէ) Սա դառնին մէջ ամէն բան պիտի գտնես. պատառաքաղ, դանակ, դգալ, պնակ եւ անձեռնոց. բայց քիչ մը շուտ ըրէ: Սա Շուշանն ալ ճիշտ ժամանակը գտաւ թեւը կոտրելուն: (Սաքեմին եւ

Արաֆսիին) Եկէք զաւակներս, վրանիդ գլուխնիդ քիչ մը շտկեցէք. այդ կերպարանքով սեղան չի նստուիր, եթէ մէկը գայ և ասանկ տեսնէ ձեզ...

Արաֆ. — Այո մօրաքոյր. (Կամաց մը Շուշանին ականջն ի վար գացած պահուն) Հիանալի եղեր ես, իրաւ որ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

ՇՈՒՇԱՆ (առանձին)

(Կը բացայ դարան մը եւ կ'սկսի սեղանը դնել) Լաւ սկզբնաւորութիւն մը ըրինք, պէտք է որ մինչեւ վերջը այսպէս երթայ և Տիկինը բան մը չկռահէ: Պէտք է նաեւ որ այս ծպտումովս հաճելի չըլլամ իրեն, սկսինք: Սեղանին վրայ ո'չ դանակ կայ, ո'չ պատառաքաղ, ո'չ ալ դգալ, բաց աստի գինիին չիչն ալ չկայ, թող չըլլան, հոգս: Եւ յետոյ՝ եթէ մէկ երկու պնակ կոտորեմ, ի՞նչ կ'ըլլայ որ. (դուռը կը զարնեն) այցելութիւն մըն է անշուշտ. (քիչ մը յառաջ կ'երթայ տեսնելու համար) Տիկին Արշալոյս և իր տղան, աշխարհքիս ամէնէն անախորժ, ամէնէն աւելի չփացած տղան: Աս տիկինն ալ միշտ ճաշի ատեն կուգայ: (Նորէն դուռը կը զարնուի եւ Տիկ. Հռիփս. ներս կուգայ փութով):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Տիկ. Հռիփս. ՇՈՒՇԱՆ

Տիկ. Հռ. — Փառանձեմ, ըսէ Տիկ. Արշալոյսին թէ դուրս ելած եմ քեռորդիներու հետ, (նշմարելով որ սեղանը դրուած է) և թէ ճաշի չպիտի գամ, հասկցա՞ր:

Շուշ. — Այո, Տիկին:

Տիկ. Հռ. — Ես դուրս ելած կ'ըլլամ եւ ճաշի չեմ կրնար գալ, և եթէ սպասել ուզէ, պիտի ըսես իրեն թէ... դուն ինքդ ալ ստիպուած ես դուրս ելլել, կը հասկնա՞ս:

Շուշ. — Այո, Տիկին:

(Տիկ. Հռիփս. անապարանգօք դուրս կ'ելլէ)

(Տիկ. Արշալոյս կուգայ պզտիկ տղայ մը ձեռքը բռնած)

Զ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՇՈՒՇԱՆ, ՏԻԿԻՆ ԱՐՇԱԼՈՅՍ, ՀՐԱԶԵԱՅ

Տիկ. Արշ. — Տիկին Հռիփսիմէն հո՞ս է:

Շուշ. — Այո, Տիկին:

Տիկ. Արշ. (նշմարելով). — Անանկ է նէ, ըսէ իրեն թէ կը փափաքիմ գինքը տեսնել:

Շուշ. — Անտարկոյս, Տիկին, պիտի տեսնէք զինքը :

Հրաչեայ. — Երթա՛նք, մայրիկ :

Տիկ. Արշ. — Լռէ՛, զաւակս, լռէ՛. (Շուշանին) Կարծեմ Տիկ. Հռիփսիմէն դեռ չէ ճաշած :

Շուշ. — Ոչ տակաւին, Տիկին. (Առանձին) Այնպէս մ'ընեմ որ ստիպուի զինքը հրաւիրել :

Հրաչ. — Անօթի եմ, մայրիկ :

Տիկ. Արշ. — Լռէ՛ քիչ մը զաւակս. (Շուշանին նայելով) Դուք արդեօք Շուշանին հետ ազգականութիւն ունի՞ք :

Շուշ. — (առանձին) Ա՛յ . . . (բարձր) Շուշանը մօրեղբորս աղջիկն է, Տիկին :

Տիկ. Արշ. — Հա՛, սանկ ըսէ. գիտեմ որ բան մը կայ. այնքան կը նմանիք անոր. ո՞ւր է ան հիմայ :

Շուշ. — Թեւը կոտրեց տիկին, անցեալ օր, խեղճը, մեղք. . .

Տիկ. Արշ. — Ինչպէ՛ս, թեւը ըսիք. . .

Հրաչ. — Մայրիկ, ես պիտի երթամ :

Տիկ. Արշ. — Զաւակս, լռէ, ըսի, քիչ մը. (Շուշանին) Ահ, խեղճ աղջիկը, մեղք, ինչպէ՞ս եղաւ որ :

Շուշ. — Երբեք չէք կրնար երեւակայել, տիկին, թէ . . . հա՛, ահա Տիկ. Հռիփսիմէն ալ կուգայ, երթամ իմաց տամ իրեն ձեր այցելութիւնը. շատ ուրախ պիտի ըլլայ : (Շուշան քիչ մը յառաջ կ'երթայ եւ կը պոռայ) Տիկ. Հռիփսիմէ ահաւասիկ եկաւ տիկին. . .

Տիկ. Արշ. — Արշալոյս :

Շուշ. — Տիկին Արշալոյս, որ կը փախչի ձեզ տեսնել :

Տիկ. Հռ. (Բարկացած). — Լաւ, հիմայ կուգամ :

Տիկ. Արշ. — Անհանգիստ մի ընէք տիկինն, կ'աղաչեմ, անհանգիստ մի՛ ընէք :

Շուշ. — Եթէ իմաց չի տամ իրեն, վերջը ինծի խօսք կուգայ, տիկին :

(Տիկ. Հռ. ներս կը մտնէ)

(Շարունակելի)

ՍԱՌՆԱՐԱՆԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Շարունակութիւն 34րդ Թիւէն եւ վերջ)

. . . Սառնարանը կը շարունակէր տակաւ յառաջանալ : Տասը գարուններ ալ անցան եւ տապատակիչ տարրը քայլ մը եւս առնելով Իւլրիխի բնակարանին հիմունքը դղրդեց :

Իննուսուն տարիներ, որոնց վաթսուներ յետին չքաւորութեան մէջ անցած, մարտիրոսացուցած էին այս մարդուն մարմինը, ուսերը կքած, մսերը չորացուցած, աչքերը քամած . . .

Ուրախութեամբ ողջունեց առաջին սառի կտորը, որ իյնալով իր դրան կը բաղխէր : Մտածեց թէ տառապանքներուն վախճանը հասած է և իր կործանող պատերը իբր գերեզման պիտի ծառայեն իրեն :

Բայց քանի՜ շաբաթները կ'անցնէին, այդ տեղի վիճակը տարօրինակ փոփոխութիւններ կը կրէր : Սառնարանը կարծես կանգ առած էր ու իր խարխալը Յուլիսի վառ ջերմութեան տակ արագօրէն կը հալէր :

Առտու մը Իւլրիխ մտացնոր քաղաք վազեց, զողորմուն ծունգերուն վրայ տատանելով : Փողոցներէն անցաւ բոլոր ոյժովը պոռալով :

— Մը. Շըշ եկե՛ր է . . . Մը. Շըշ եկե՛ր է . . . :

Կրան-Մուլանի դրան առջեւ, զոր Մէօրէնի թոռները կը բանեցընէին, ճամբայ ելլելու պատրաստ դրօտաշրջիկներու խումբ մը ծաղրի առաւ զինքը. բայց Թախմար, բնաւ ու չադրութիւն չըրաւ, միշտ պօռալով՝ « Մը. Շըշ եկե՛ր է » : Ուղղուեցաւ դէպի նախկին դատաւորին բնակարանը՝ ետեւուն քաշելով իրուն բազմութիւն մը որ կը հարցնէր ինքնիքեն թէ ո՞վ կրնայ ըլլալ այդ Մը. Շըշը :

Երբ Իւլրիխ հասաւ բաւական վայելուչ ու հնաձեւ ապարանքին տակը, բոլոր ուժովը կանչեց. « Պարոն՝ դատաւոր, պարոն՝ դատաւոր » : Պարապ տեղը լռեցնել կ'ուզէին զինքը, յիշեցնելով թէ պաշտօնի վրայ եղող դատաւորը հոն չբնակիր : « Բայց քանի որ կ'ըսեմ թէ ի՛մ դատաւորս է ան » կը պատասխանէր Թախմար : Քանի մը վայրկեան ետքը սպիտակափառ դէմք մը երեւցաւ պատուհանը :

— Բարե՛ւ, պարոն դատաւոր . . . ես Իւլրիխ Թախմարն եմ . . . պէտք է որ գաք անմիջապէս պարոն Շըշը տեսնելու . . . :

Նախկին պաշտօնակալը յիշատակները ամփոփեց՝

— Իրա՛ւ, կը յիշեմ այդ անունները, ըսաւ մեկամեղձիկ հառաչով մը, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Հիմա կը հասկցնեմ ձեզ, պարոն դատաւոր: Ստորին Սառնարանի վարի կողմը հալելու վրայ է. Պարոն Շըշ... կը յիշե՞ք, Պարոն Շըշ... որ ժամանակով կորսուեցաւ, ինչպէս ես ալ՝ Իւլրիխ Թակմար...:

— Այո՛, գիտեմ, ըսաւ դատաւորը ծանրօրէն:

— Լա՛ւ, Մը. Շըշ՝ իր ինկած ձեղքին մէջ, մինչեւ խրճիթիս դուռը քլուեր է... գլուխը կը տեսնուի կողմ... ո՛հ, շատ լաւ ճանչցայ զինքը... բնաւ չէ փոխուած. վազեցէ՛ք, պարոն դատաւոր, պէտք է...:

— Ի՞նչ կ'ուզեն ինչ անգիլի աշխարհէն վերադարձող այս մարդիկը, մըմուսց մեքենաբար դատաւորը... Երթամ տեսնամ...:

*
* * *

Եւ մէկդի ընելով ծերուկ սպասուհին որ կ'ուզէր արգիլել զինքը, վար իջաւ: Ամբոխը խռնուած էր:

— Առաջնորդէ՛ ինծի, ըսաւ դատաւորը:

— Անշո՛ւշտ, պիտի առաջնորդեմ ձեզ, գոչեց Թակմար. այո՛, պիտի առաջնորդեմ ձեզ:

Եւ յաղթական շեշտով մը կը կրկնէր այս խօսքը. որ իր մըտքին մէջ, տեսակ մը վերատաքում էր կորուսեալ պատիւին:

Եւ բազմութիւնը ետեւնուն գնաց հետաքրքրութենէ չարժած: Թակմար կըցածին չափ շուտ կը քայլէր. եւ հեւհեւ դատաւորը Իւլրիխի տնակին առջեւը շունչ առաւ:

Թանձր ցեխի ու աղտոտ ձիւնի մէջտեղ սառի շրջանակի մը մէջ կը հանգչեր մարդկային գլուխ մը բոլորովին կապուեցած: Իւլրիխ բրիչ մը առաւ ու բոլոր ուժովը սառը կոտորելու աշխատեցաւ: Քիչ ետքը ամբողջ դիակին մարմինը մաքրուեցաւ սառէն:

— Պարոն՛ դատաւոր, գոչեց Թակմար, գրպանները խուզարկեցէ՛ք:

Դատաւորը հնազանդեցաւ խօսակցին ազդեցութեան տակ, կարկամած մատներովը բացաւ սառած կտուր ու գրպաններէն դուրս հանեց բանալիներու տրձակ մը, ափ մը դրամ՝, քսակ մը լեցուն ոսկի եւ ժամացոյց մը՝ Ռ. Շ. սկզբնատառերով, որոնք Ռօտօլֆ Շըշմանի ինքնութիւնը կը հաստատէին:

Այն ատեն Իւլրիխ Թակմար շտկուեցաւ եւ խօսքը ուղղեց դատաւորին որ կ'ընցաւ այս հանդարտ ձայնին տակ:

— Տակաւին կը հաւատա՞ք թէ ես գող մը եղած ըլլամ։ Այս հանդիսատեսներու առջեւ խոստովանելու սիրտը պիտի ունենամք։

Դատաւորին վրայ նուազում մը եկաւ, եւ երկու հոգի հազիւ հասան զայն բռնելու. յետոյ ինքզինքը ժողովելով դարձաւ ամբօխին՝ որ հազիւ կ'ըմբռնէր անցած դարձածը։

— Թշուա՞ռ իւրիւրի թակմար, ըսաւ... աւա՛ղ, բարեկամներս, կը կարծէի թէ ասպարէզս առանց մեղադրանքի անցուցած էի։ Երեկ պատրաստ էի մահուան, խիղճս հանդարտ ու առանց խայթի, Հիմա՛ կորոնցուցի իմ վերջին օրերու հանգիստը... Ժամանակը, իւրի՛խ, մեզի չպատկանիր ալ, կը պաղտտիմք՝ զ, ծընրադրած, այս նախաինամական նշխարներուն առջեւ, ներէ՛ք եզի ըրած անիրաւութիւնս... կ'ուզե՞ս զիս գրկել...։

— Ա՛հ, պարոն դատաւոր, մըմնջեց թակմար շփոթած. իրեն առջեւ բացուած բազուկներուն մէջ նետուելով։

Եւ պապուկի անճարակութեամբ, իր գրգռեալները աղտոտուեցին դատաւորին մաքուր հագուստները։

Եւ սակայն գաղափար մը կը տանջէր տակաւ նախկին ատենակալին միտքը։

— Ինչո՞ւ համար ինքզինքդ աւելի աղէկ չպաշտպանեցիր այն օրը, հարցուց։ Մարդ խօսելիք չատ մը բաներ կը գտնէ, կը պոռայ, կը բարկանայ։

— Ի՞նչ ընեմ, պատասխանից թակմար, միշտ վախկոտ եղած եմ, միակ յանցանքս այս է։

Թարգ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԲՕԼ ՀԵՐՎԵՏՕ

Ֆրանս. Կաճառէն

ԱՄԲԱԿՈՒՄԻ ԼՈՒԲԱՆՆԵՐԸ

Ք... գիւղին բոլոր բնակիչները լուրիս ցանելու գացել էին. Դաշտերուն մէջ, բլուրներուն վրայ գիւղացիները կը քրտնէին, կը տքնէին։ Ք... գիւղին լուրիան անուանի է, և եթէ աղւոր անձրեւներ գային ատենին, հիանալի հունձք մը պիտի արգիւնաւորէր իրենց տաժանքը։

Այս աշխատաւորներուն մէջ ամէնէն աւելի ոգի ի բռին աշխատողը, Ամբակումն էր։ Թեւերը տոթտած, սրունքները բաց, գլուխը կախ, կը փութէր։ Երբ ամբողջ դաշտին մէջ ընկոյզի մեծութեամբ քար մը կամ հողի կոշտ մը չմնաց, երկայն չուան մը առաւ երկու ծայրերէն սուր փայտեր կապեց, փայտերը գետին գամեց և չուանը ձգտեց, մէկ, երկու, երեք, հինգ, տասը

գուգահեռական փոսիկներ փորեց, երբ բոլոր ասոնք վերջացուց, փորած գիծերէն մէկուն գլուխը անցաւ և ծունդը գետինը դրած սկսաւ ցանել:

— Հով կը ցանենք կոր, ըսաւ քթին տակէն, ի՛նչ ալ ըսէ տէր պապան, գիշերը փոթորիկ մը չհանելու միակ միջոցն այս է:

Իրաւ ալ Ամբակում հով կը ցանէր կոր. երեք վայրկեանը անգամ մը ձեռքը կոշովին մէջ տանելով ոչինչ կը բռնէր, իրար սեղմած ցուցամատին ու բթամատին մէջտեղ բան մըն ալ չկար երբ հողին մէջ կը գնէր, և ձախ ձեռքով՝ հողը փորուածքին մէջ թափելով երեւակայական լուբիաներ միայն կը ծածկէր:

Եւ սակայն դաշտէն հարիւր քայլ հեռու, պուրակին շուքին տակ նստած մարդ մը կը դիտէր Ամբակումի շարժումները՝ առանց անկէ տեսնուելու:

— Է՛հ, է՛հ, կ'ըսէր ինքնիրեն, Ամբակում կ'աշխատի կոր:

Պըն. Ղազարուն էր աս, անսիրտ Ղազարոսը, որու համար գիւղացիները կ'ըսէին թէ վաշխառութեամբ ժամանակ կ'անցնէ: Այդ օրը դատարանը գոց ըլլալով, չէր կրնար մէկու մը կոչնագիր շնորհել, ուստի տետրակները առած դաշտ ելեր էր, որովհետեւ Պըն. Ղազարոս կը սիրէր բնութիւնը և թռչուններուն երգը փոխանակ զինքը սխալեցնելու, աւելի շատ տոկոս հաշուելու կը դրդէր: Ամբակումի աշխատիլը տեսնելով միտքը բան մը ինկաւ.

— Սա մարդուն հաշիւներուն մաքուրը քաշենք, ըսաւ ինքնիրեն: Եւ շուտ մը տեսաւ որ առջի տարին իրմէ քսան մէծիտ փոխ առած ըլլալով նոյն տարին ճիշտ 12 ոսկի պարտական կ'ըլլար:

— Բա՛հ, ըսաւ, լուբիաները պարտքը կը լեցնեն: Հունձքի ատեն արգելքի տակ կ'առնեմ:

Եւ տեղէն ելլելով դէպի դաշտը ուղղուեցաւ. նոյն ատեն Ամբակումի կինը կէսօրուան ճաշը առած ամուսինին կը բերէր: Ժիր աշխատաւորն՝ գործը թողուց, գնաց ձեռքերն ու երեսը լուաց, հագուստները վար առաւ եւ ծառի մը շուքին նստած սկսաւ ճաշը ընել:

— Նայէ՛, Ձուն, ըսաւ կնոջը յանկարծ, սա եկողը Պ. Ղազարոսը չէ՞:

— Բարի լոյս, Ձո՛ւն, բարեւ Ամբակում, ըսաւ վաշխառուն ռեզային ձայնով մը, աչքը շուրջանակի դաշտին վրայ պտտցնելով, լուբիաները շատ աղւոր տնկուած են, միայն թէ սառելու ձգել պէտք չէ:

— Մի՛ վախնաք, պատասխանեց Ամբակում փիլիսոփայօրէն. հունտը շատ աղէկ տեսակէն է:



Եւ հանդարտօրէն ճաշը աւարտեց, դանակը սրբեց, վերջին գաւաթը խմեց եւ գործի սկսաւ, մինչ Զուն եւ Պ. Ղազարոս կը հեռանային:

— Թշուառական լուբիանե՛րը, կը մրմռար գործը շարունակելով, ահա՛ հատ մըն ալ, հատ մըն ա՛լ, հատ մըն ա՛լ, հարի՛ւր, հազա՛ր: Թող դրացիներս չըսեն թէ Ամբակում տակառին տակը պառկեր է այսօր ալ:

Եւ ասանկ մինչեւ իրիկուն տեսեց:

— Էհէ՛, Ամբակում, կը պօռային գիւղացիները՝ ուրոնք տոպրակը կռնակնին, բրիչը ուսերնուն վրայ, խումբ խումբ տուն կը դառնային:

— Մնացածն ալ վաղը կը ցանես:

— Վաղն ալ օր է, շատ մի՛ հոգնիր:

Վերջապէս Ամբակում գործը աւարտեց. մեկնելէ առաջ անգամ մը դիտեց:

— Ի՞նչ ազուրի աշխատութիւն, մրմռաց ծաղրածու եւ միանգամայն գոհ երեւոյթով մը:

Անշուշտ գիտնալ կ'ուզէք թէ ո՞վ էր Ամբակում եւ ինչո՞ւ հընարած էր լուրիս տնկելու այս նորօրինակ դրութիւնը:

Ամբակում փիլիսոփայ մըն էր, գիւղի ճշմարիտ փիլիսոփայ մը որ ամէն բան եղածին պէս կ'ընդունի եւ անհոգ ու անգործ օրէ օր վատթար կեանք մը կը վարէր: Պարապորդ ընկերակիցներու հետ շաղակրատելու համար ամէն գործ երեսի վրայ կը թողուր: Բայց Ամբակումի ամէնէն մեծ մեղքը խաղամոլութիւնն էր. կատաղի խաղամոլ մըն էր ան, որ չպիտի վարանէր կինն ու զաւակները գրաւի դնել բաւթի մը դարձնելու համար:

Ճիշդ այս պատճառով, ինք որ առաջները շատ դիւրակեցիկ կեանք մը կը վարէր, սկսեր էր նեղուիլ ու չքաւորի պէս ապրիլ: Իր հունձքերը առաջուրնէ կը ծախէր, դաշտերն ու այգիները՝



վաշխով առած դրամի փոխարէն գրաւի կը դնէր: Ամէն իրիկուն գինով ու զրպանները պարապ տուն կը դառնար ու կնոջը հետ կռիւի կը բռնուէր: Գիշերները շատ կը տանջուէր խղճի՝ խայթէն, որովհետեւ Ամբակում բարի սիրտ մը ունի, եւ երդում կ'ընէր այլ եւս չխաղալու, եւ յաջորդ առտուն նորէն կ'սկսէր:

Այդ առտուն ալ Ամբակում լաւ տրամադրութիւններու մէջ արթնցեր եւ տակաւին աքլորները չխօսած՝ դրան առջին տուարակ մը լուրիս կը բեռնէր էշուն վրայ: Եւ ի՞նչ լուրիսներ, տեսնա՛ք, խոշոր խոշոր ու ծանր, բուն իսկ սերմնացու հատեր:

— Աղէկ տնկէ և մի՛ թափթփեր, ըսաւ կինը օգնելով իրեն, գիտես որ ասկէ զատ ուրիշ չունինք:

— Հոգ մի՛ ըներ, Զուն, սատանան առնէ հոգիս եթէ քեզ գոհ չթողում: ... Տէ՛հ, իշուկ:

եւ էջը առջեւէն, Ամբակում ետեւէն ճամբայ ելան: Չար բաղդէն, հազիւ թէ քաղաքէն դուրս ելած էր, Ֆրա սափրիչին հանդիպեցաւ, որ մօտիկ ագարակի մը մէջ մինչեւ լոյս թուղթ խաղալէն աչքերը կաւ կարմիր կտրեր էին:

— Շատ ուշ մնացեր ես, Ֆրա:

— Շատ կանուխ ելեր ես, Ամբակում:

— Իրա՛ւ, կատուններն անգամ կը քնանան կոր:

— Եկուր բարդի մը խաղանք:

— Միլիոն մըն ալ տաս չեմ խաղար:

— Տղայութիւն չուղեր, Ամբակում, պզտիկ ձեռք մը միայն:

— Հապա՛ լուբիաներս:

— Լուբիաներդ թող սպասեն:

Խեղճ Ամբակում չդիմացաւ փորձութեան: Ֆրա գրպանէն ձեռք մը թուղթ հանեց: Խաղ մը դարձուցին, յետոյ ուրիշ մը, յետոյ երրորդ մը, և լուբիաները սպասեցին:

Արեւուն ճառագայթները ձաթեցան պատին վրայ ուր երկու խաղացողները իբր սեղան բազմեր էին, երբ Ամբակում գրպանները պրպտելով տեսաւ որ բան մը չէր մնացեր:

(Մնացեալը յաջորդ անգամ)

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ

մասնակցեցան վեց հոգի, որոնք, առաքումի թուականի կարգաւ են. Տիարք՝ Հրաչեայ Եղիսէֆեան (Գատըքէօյ), Գ. Էօլմէղեան (Մանիսա), Յ. Շէրպէթեան (Բէօթահիա), Գէորգ Վ. Ղալիօնձեան (Օրտու), Պօղոս Բագրատունի (Տիարպէքիր) և Յոյն Ուսանող մը (Գատըքէօյ):

Բոլոր մրցողներն ալ երկու խնդիրները ճիշտ լուծած էին, բացի Հ. Էֆ. Եղիսէֆեանէ որ Բ. խնդիրը չէր յաջողած: Որով առաջնութեան կարգը կ'առնէ Գ. ԷՕԼՄԷՋԵԱՆ Էֆ. եւ որ պիտի ստանայ Յ. Աթանասեան Էֆ. ի նուէր տուած «Տիւզէնձեան համարակալութիւն»ը:

Ա. Խնդիրին պատասխանն էր 92

Բ. » » » 76543

ԻՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱՅԻՉ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԿԵԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի Ճատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

ԱՄՍՈՐ Ի ԳԻԳԻԳԻ ԳԻՂՈՒՄՈՒ

(ՄԱՐԱԿԱՆ ՄԱՅՄԱՅԷ)

Կարգադրանքի մասին հրահանգներ և օրհանգրվաններ
հետևյալից են. 1. Կարգադրանքի մասին հրահանգներ
2. Կարգադրանքի մասին հրահանգներ
3. Կարգադրանքի մասին հրահանգներ
4. Կարգադրանքի մասին հրահանգներ
5. Կարգադրանքի մասին հրահանգներ
6. Կարգադրանքի մասին հրահանգներ
7. Կարգադրանքի մասին հրահանգներ
8. Կարգադրանքի մասին հրահանգներ
9. Կարգադրանքի մասին հրահանգներ
10. Կարգադրանքի մասին հրահանգներ

Ջրագնացության մասին հրահանգներ

Ջրագնացության մասին հրահանգներ
1. Ջրագնացության մասին հրահանգներ
2. Ջրագնացության մասին հրահանգներ
3. Ջրագնացության մասին հրահանգներ
4. Ջրագնացության մասին հրահանգներ
5. Ջրագնացության մասին հրահանգներ
6. Ջրագնացության մասին հրահանգներ
7. Ջրագնացության մասին հրահանգներ
8. Ջրագնացության մասին հրահանգներ
9. Ջրագնացության մասին հրահանգներ
10. Ջրագնացության մասին հրահանգներ
11. Ջրագնացության մասին հրահանգներ
12. Ջրագնացության մասին հրահանգներ
13. Ջրագնացության մասին հրահանգներ
14. Ջրագնացության մասին հրահանգներ
15. Ջրագնացության մասին հրահանգներ
16. Ջրագնացության մասին հրահանգներ
17. Ջրագնացության մասին հրահանգներ
18. Ջրագնացության մասին հրահանգներ
19. Ջրագնացության մասին հրահանգներ
20. Ջրագնացության մասին հրահանգներ

ՄԱՅՄԱՅԷ ՄԱՐԱԿԱՆ
ՄԱՅՄԱՅԷ ՄԱՐԱԿԱՆ

Խոյալից հայտարարություն

Խոյալից հայտարարություն

Մասնավորապես և հայտարար

Մասնավորապես և հայտարար
1. Մասնավորապես և հայտարար
2. Մասնավորապես և հայտարար
3. Մասնավորապես և հայտարար
4. Մասնավորապես և հայտարար
5. Մասնավորապես և հայտարար
6. Մասնավորապես և հայտարար
7. Մասնավորապես և հայտարար
8. Մասնավորապես և հայտարար
9. Մասնավորապես և հայտարար
10. Մասնավորապես և հայտարար
11. Մասնավորապես և հայտարար
12. Մասնավորապես և հայտարար
13. Մասնավորապես և հայտարար
14. Մասնավորապես և հայտարար
15. Մասնավորապես և հայտարար
16. Մասնավորապես և հայտարար
17. Մասնավորապես և հայտարար
18. Մասնավորապես և հայտարար
19. Մասնավորապես և հայտարար
20. Մասնավորապես և հայտարար

ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆԹԻԹԻԻԹ Ի ԳՕՆԻԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող Ամերիկեան միւս գոլէճներուն յար եւ նման ծրագրով մը՝ Օսմ., Հայ., Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ Բնական, Բնապատմական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իբրեւ արուեստ կ'ուսուցանէ կահադործութիւն, լուսանկարչութիւն եւ ջութակահարութիւն: Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ երեք տարուան

Վաճառականական Ինտերնացի

մը՝ ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս Առեւտրական Աշխարհ., Թուաբ., Տոմարակալութ., Օրէնագիտութիւն, Վաճառականական եւ Սեղանաւորական դործողութիւններ, Պաշտօնական եւ ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Օսմ., Հայ., եւ Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն., եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու: Տարակոյս չկայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան: Գիշերօթիկներու դպրոցական տարեթուական է միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24 ին: Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել տո Տնօրէնն Վեր. Տքղ. Ա. Յ. Հայկազեան. Ի Գոնիա:

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆԸ

Փոխադրուած ըլլալով՝

ՊԱՐՈՒ, ՊԱՊԸ ԱՆԸ ՔԱՅՏԷՍԻ, ԹԻԻ ՅՏ. ԻԳՏԱՐ ԼԵԱԳՐԻ ԴԷՄ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամէն տեսակ գրքեր, մանուկներ, հանդեսներ, օրագրերականներ, հաւաստիքի հրաւիրագրեր, համակալույթներ, աշ. աւ. օրեր, Եւ տպագրութեան վերաբերեալ ամէն տեսակ պիտոյքներ: — Տպագրութեան սեփական 20000 անկի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անոնցի մատուցելու եւ ճշգրտագործելու:

Գաւառներէն ալ կ'ընդունի ամէն տեսակ յանձնարարութիւններ: